ՀԱԿԱԿԵՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԶԵՂԱԼՈՒՄԲՈՒՆԵՐ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը սույն թվականի հունվարի 23-ին հովվապետական այցելությամբ մեկնեց Ֆրանսիա և Ավստրալիա՝ Իր հայրապետական օրհնությունը տալու երկու թեմերի հավատացյալներին:

Վեհափառ Հայրապետը հունվարի 23-ից փետրվարի 7-ը լինելով Ֆրանսիայում, Փարիզի, Նիսի, Մարսելի հայկական եկեղեցիներում սուրբ պատարագ մատուցեց, իր ողջույնը և հայրական օրհնությունը տվեց հայ հավատացյալներին, նախագահեց Իր պատվին կազմակերպված համայնքային ընդունելություններին, հանդիպեց Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակին, Ֆրանսիայի Արտաքին գործոց նախարար Էրվե Դը Շարեթի և Սենատի նախագահ Ռընե Մոնորիի հետ: Ֆրանսիայի հանրապետության նախագահի հետ հանդիպման ժամանակ նախագահ Ժակ Շիրակը Գարեգին Ա Կաթողիկոսին պարգևատրեց Պատվո Լեգեոնի շքանշանով:

Ավարտելով հովվապետական-հայրապետական անդրանիկ այցելությունը Ֆրանսիա, Գարեգին Ա Վեհափառը, մեկնեց Ավստրալիա՝ փետրվարի 7-ից 26-ը իր անդրանիկ հովվապետական այցելությունը տալով Ավստրալահայ թեմին, լինելով նաև Սինգապուրում և Թաիլանդում, ամենուր իր հայրական օրհնությունները բաշխելով հայրենակարոտ ժողովրդին, հանդիպումներ ունենալով կրթա-մշակութային հաստատություններում և ազգային եկեղեցական կազմակերպություններում, ինչպես նաև պետական բարձրաստիճան պաշտոնյաների և ղեկավարների, այդ թվում նաև՝ Ավստրալիայի վարչապետ Ջոն Հովարդի հետ:

Ֆրանսիայում և Ավստրալիայում Վեհափառ Հայրապետը էկումենիկ ոգով հանդիպումներ և տեսակցություններ ունեցավ երկու երկրներում գործող քույր եկեղեցիների և հարանվանությունների ներկայացուցիչների հետ:

Հայոց Հայրապետը Ֆրանսիա և Ավստրալիա կատարած հովվապետական իր ուղևորությունից Մայր Աթոռ վերադարձավ մարտի 2-ին: